ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի հուլիսի 10-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԴԴ-ԲՄԱՊՁԲ-20/01»

Դատական դեպարտամենտի կարիքների համար սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԲՄԱՊՁԲ-20/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 08.07.2020թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 10.07.2020թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1
«Համակարգչային մոնիտոր
Հարգելի պատվիրատու,
Համակարգչային մոնիտորի տեխնիկական բնութագրում նշվաց է՝ առնվազն 2 հատ ընդունող USB 2.0 պորտ, առնվազն 2 հատ ընդունող USB 3.0 պորտ, 1 հատ փոխանցող USB 2.0 պորտ կամ USB 3.0 պորտ: Դուք ի՞նչ նկատի ունեք՝ առնվազն 2 հատ ընդունող USB 2.0 պորտ, առնվազն 2 հատ ընդունող USB 3.0 պորտ, որից 1 հատը նաև փոխանցող USB 3.0 պորտ է: Խնդրում ենք պարզաբանել, քանի որ 5 պորտանի համակարգչային մոնիտոր չի արտադրվում:»

Պարզաբանում N 1
«Տեխնիկական բնութագրով նախատեսվել է ՝
առնվազն 2 հատ ընդունող USB 2.0 պորտ,
առնվազն 2 հատ ընդունող USB 3.0 պորտ,
1 հատ փոխանցող USB 2.0 պորտ կամ USB 3.0 պորտ (USB type B):
1 հատ փոխանցող USB 2.0 պորտ կամ USB 3.0 պորտ նախատեսված է մոնիտորը համակարգչին միացնելու համար:»

Հարցադրում N 2
«Որակավորման և պայմանագրի ապահովում
Հարգելի՛ պատվիրատուն, խնդրում ենք պարզաբանել որակավորման և պայմանագրի ապահովման ժամկետները , ե՞րբ են ավարտվում:
Շնորհակալություն»

Պարզաբանում N 2
««ԴԴ-ԲՄԱՊՁԲ-20/01» ծածկագրով ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 10-րդ բաժնով սահմանված է.
Որակավորման ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև **պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան** հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:
Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև **կնքվելիք պայմանագրով սահմանվող *պարտավորությունների* ամբողջական կատարման վերջին օրվան** հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԲՄԱՊՁԲ-20/01» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԲՄԱՊՁԲ-20/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: